

# ՄԱՍԵԱՑ ԱՂԱՒՆԻ

## ԱՒԵՏԱԲԵՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

## ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԵԼԻՔ.

### ԹԵՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

### ՎԻՃԱԿԻՍ ՀԱՅՈՑ ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ԵՒ ՊԵՍԱՐԱԲԻՈՅ

ԱՏԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՔ.

*Յուլիսի 13.* — Վիճակիս Գերապատիւ Առաջնորդը այս տարի անձամբ գտնուեցաւ *Փրկիչ* վանքին մեծահանդէս ուխտին, հետը տանելով Խալիպեան Ուսումնարանի երգասաց աշակերտներէն 8 հոգի: Ս. Փրկիչ վանքը, Խարասուէն 12 վերստ հեռաւորութիւն ունի. ուստի նոյն օրը երեկոյեան 7 ժամուն հասաւ այնտեղ, եւ վայելուչ հանդիսով դիմաւորուեցաւ յեկեղեցականաց եւ յաշխարհականաց: Երեկոյեան ժամերգութենէն ետքը ներկայ եղաւ եւ Հանգստեան աղօթքին, եւ հետագայ օրը սուրբ պատարագը ինքը մատոյց: *Հայր մերին* ժամանակը ասաց այն սրտառուչ քարոզը՝ որ տետրակիս մէջ կհրատարակուի: Ձկնի պատարագին ժողովեցան ուխտաւորներէն շատը Գեր. Առաջնորդին իջեւանը, եւ նորա հետ սեղանակից եղան. իսկ նա կէս օրէն ետքը ճամբայ ելաւ դէպի Թէոդոսիա, ուր եւ ժամանեց երեկոյեան պահուն ժամը 10:—Փրկիչ վանքին ներքին մաքրութեանը եւ արտաքին պայծառութեանն ու բարեզարդութեանը համար Առաջնորդին շնորհակալութիւնն ընդունեցաւ Խարասուի եկեղեցւոյ Աւագ քահանայն Դաւիթ Շահվէրտեան, եւ վանքին մեծարոյ Երէցփոխան Յովսէփ Աղայն Պարոնեան՝ որ երեք տարուան մէջ մեծ արդիւնաւորութիւն ունեցած է վանքին վրայ, հնացեալ խուցերը վերանորոգելով, եկեղեցւոյ դրան մօտ եղած աղբիւրն ու մատաղատունը նոր ի նորոյ շինելով, նմանապէս եւ պարտիզին խնամք տանելով:

# ՑՈՒՑԱԿ

*Եկեղեցեաց, Եկեղեցականաց եւ Ուսումնարանաց Վիճակիս Հայոց Նախիջեւանի եւ Պեսարապիոյ ի1862 ամի.*

| ՆԱՀԱՆԳՔ, ՔԱՂԱՔՔ ԵՒ ԳԻՒՂՕՐԱՅՔ. | ԵԿԵՂԵՑԻՔ. | | | | | | ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ. | | | ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՔ. | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Կաթուղիկէք. | Ժողովրդականք. | Գերեզմանատանց. | Ընդ ամենայն. | Երկուս որոց: Քարաշէնք. | Երկուս որոց: Փայտաշէնք. | Սրբազնագործք. | Ստորինք. | Թիւք ժողովրդոց. | Ժողովրդական Դպրոցք. | Թիւք Ուսուցչաց. | Թիւք ուսանողաց. |
| *Ի Նահանգին Տաւրիոյ.* | | | | | | | | | | | | |
| Ի Քաղաքն Սիմֆերոփոլ | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 1 | 720 | 1 | 2 | 25 |
| ,, Եւպատորիա | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 1 | 80 | 1 | 1 | 8 |
| ,, Պաղչէսարայ | — | 1 | — | 1 | 1 | — | — | — | 25 | — | — | — |
| ,, Խարասուպազար | — | 1 | — | 1 | 1 | — | 2 | 2 | 921 | 1 | 3 | 51 |
| ,, Թէոդոսիա | 1 | 1 | 1 | 3 | 3 | — | 1 | 1 | 739 | 2 | 7 | 60 |
| ,, Հին Խրիմ | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 1 | 479 | 1 | 2 | 28 |
| ,, Օրպազար | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 2 | 525 | 1 | 2 | 25 |
| ,, Նողայսք | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 3 | 394 | 1 | 2 | 13 |
| ,, Կերչ | — | — | — | — | — | — | 1 | 1 | 223 | 1 | 1 | 17 |
| *Ի Նահանգին Պեսարապիոյ.* | | | | | | | | | | | | |
| Ի Քաղաքն Քիշնեւ | 1 | — | — | 1 | 1 | — | 3 | — | 491 | 1 | 2 | 30 |
| ,, Ազքիրման | — | 1 | — | 1 | 1 | — | 2 | 6 | 866 | 1 | 2 | 59 |
| ,, Հօթին | — | 1 | — | 1 | — | 1 | 1 | 2 | 209 | — | — | — |
| ,, Օրհէյ | — | — | — | — | — | — | 1 | 3 | 337 | — | — | — |
| Ի Քաղաքագիւղն Հնչեստ | — | 1 | — | 1 | — | 1 | 1 | 5 | 219 | — | — | — |
| *Ի Նահանգին Քերսոնի.* | | | | | | | | | | | | |
| Ի Քաղաքն Գրիգորիուպօլիս | 1 | 1 | — | 2 | 2 | — | 2 | 3 | 858 | 1 | 2 | 49 |
| ,, Օտեսսա | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 1 | 628 | 1 | 1 | 15 |
| *Ի Նահանգ. Եկատերինոսլաւի.* | | | | | | | | | | | | |
| Ի Քաղաքն Նախիջեւան | 1 | 5 | — | 6 | 6 | — | 22 | 16 | 10,604 | 2 | 7 | 82 |
| Ի Գիւղօրայսն Չալթր | — | 1 | — | 1 | 1 | — | 2 | 1 | 2318 | — | — | — |
| ,, Թօպտի | — | 1 | — | 1 | 1 | — | 2 | — | 2352 | — | — | — |
| ,, Մեծ Սալա | — | 1 | — | 1 | 1 | — | 2 | — | 1308 | — | — | — |
| ,, Փոքր Սալա | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | 1 | 535 | — | — | — |
| ,, Նեսվիթայ | — | 1 | — | 1 | 1 | — | 1 | — | 611 | — | — | — |
| Ի Մայրաքաղաքն Փեթերպուրկ. | — | 1 | 1 | 2 | 2 | — | 1 | 2 | 154 | — | — | — |
| ,, Մոսկուա. | 1 | 1 | 1 | 3 | 3 | — | 3 | 1 | 220 | — | — | — |
| *Ընդ ամենայն* | 5 | 25 | 3 | 33 | 31 | 2 | 54 | 53 | 25,818 | 15 | 35 | 453 |